ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11-ը սեպտեմբերի 2025թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԳԿՎ ԹԱ գնումների վերլուծության բաժնի պետ, Հ. Մելիքյան /ԳԱՊ/
- ՀՀ ՊՆ ԳԿՎ ԹԱ գնումների վերլուծության բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Է. Համբարձումյան,
- ՀՀ ՊՆ ԹԱՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ, փոխգնդապետ Հ. Մանուկյան,
- ՀՀ ՊՆ ԹԱՎ հրդեհային անվտանգության ծառայության պետի տեղակալ, փոխգնդապետ Ս. Սահակյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Սիմոնյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սիմոնյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սիմոնյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Պոժմաստեր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Սիմոնյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Սիմոնյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. միավորի գների հանրագումարը	Ընտրված կազմակերպության		Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումը	գինը առանց ԱԱՀ	անվանումները	գինը առանց ԱԱՀ	գինը ԱԱՀ	Ընդհանուր Միավորի գների հանրագումարը
1	Կրակմարիչների վերալիցքավորման և նորոգման ծառայություններ	դրամ	1	26665			«Պոժմաստեր» ՍՊԸ	33 208.33	6 641.67	39 850

Չափաբաժնի առավելագույն գինը կազմում է 5 250 000 ՀՀ դրամ

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

3.4 11.09.2025թ.-ին՝ Հաշվի առնելով որ մասնակիցը հայտով ներկայացրել է նաև հրավերով նախատեսված ծառայությունների բացվածքը՝ միավորի գների տեսքով, ինչպես նաև այն, որ մատուցվող ծառայությունը խիստ անհրաժեշտ է, հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և, քանի որ «Պոժմաստեր» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկը (միավորի գների հանրագումարի տեսքով) նախահաշվային գնից բարձր է, մասնակցի կողմից ներկայացված միավորի գները ներկայացնել պաշտպանության նախարարի հաստատմանը և հաշվի առնելով, որ ընթացակարգը կազմակերպվել է առավելագույն գնով, որը չի փոփոխվելու՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետը կիրառել միայն ծառայությունների բացվածքի՝ միավորի գների վրա և ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքել նախատեսված ֆինանսական միջոցների չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Սիմոնյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող — Հ. Մելիքյան

Գնահատող — Է. Համբարձումյան

Գնահատող — Հ. Մանուկյան

Գնահատող — Ս. Սահակյան

Գնումները համակարգող՝ — Ա. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

08-ը հոկտեմբերի 2025թ.
Ժամը 14^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԳԿՎ ԹԱ գնումների վերլուծության բաժնի պետ, Հ. Մելիքյան /ԳԱՊ/
- ՀՀ ՊՆ ԳԿՎ ԹԱ գնումների վերլուծության բաժնի 2-րդ բաժանմունքի պետ Է. Համբարձումյան,
- ՀՀ ՊՆ ԹԱՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ, փոխգնդապետ Հ. Մանուկյան,
- ՀՀ ՊՆ ԹԱՎ հրդեհային անվտանգության ծառայության պետի տեղակալ, փոխգնդապետ Ս. Սահակյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան /24.09.2025թ N 192/ՊՆՏ հրաման/ :

« ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ **«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

1.1 08.10.2025թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստը շարունակվել է և **«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովը քննարկելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետի (նախահաշվային գնից բարձր նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ պայմանով պայմանագրի կնքում) կիրառման հնարավորությունը և հաշվի առնելով կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի և պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կարծիքները /գրությունները կցվում են/ և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից հաստատված ծառայությունների նոր բացվածքը, որոշեց կիրառել վերոնշյալ ՀՀ կառավարության որոշման համապատասխան կետը միայն ծառայությունների բացվածքի՝ միավորի գների վրա ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքել նախատեսված ֆինանսական միջոցների չափով:

Արդյունքում «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված և ընտրված մասնակցի հետ կնքվելիք պայմանագրով սահմանված ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ Մ.Գ առաջին չափաբաժնով կազմում է 39 850 ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծառայության համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ Ն.Գ. առաջին չափաբաժնով նույնպես է 39 850 ՀՀ դրամ: Ուստի «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի Մ.Գ./Ն.Գ. գործակիցը կկազմի 1:

1.2 **09.10.2025թ.**՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը **«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Պոժմաստեր» ՍՊԸ և վերջինիս, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-25-7/8»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ **4**, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Հ. Մանուկյան

Գնահատող Ս. Սահակյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան